

Քլեբորեն սկսեց բժշկել նորան. յիշեցրեց
հօր հիւանդութիւնն ու սոսկալի մահը: Վախե-
ցած պատանին յօժար սրտով սկսեց բժշկի պատ-
ուէրները կատարել: Նա ի բնէ մեղմ, կամակա-
տար պատանի էր, և շատ հեշտ էր մղել նորան դէ-
պի յաջ կամ յահեակ. եթէ մի չարագործի ձեռքը
ընկնէր, այդ պատանին առաջին կարգի չարա-
գործ կը դառնար:—Բժիշկը քննելով հիւանդին,
գտաւ նորա մէջ ալլատեռութեան շատ նշաններ:
Նա թուլաջիղ (շեւրատոնենիկ) էր: Թէպէտ մի
ելեղող, անշարժ գոդափարով չէր ճնշուած նորա
դիտտիցութիւնը, բայց իւր ամբողջ կողմութեան
մեքենան զանդաղ էր գործում: Արեան ճնշումը
թոյլ էր, տեսողութիւնը տկարացած էր, համա-
զգածութիւնը ջլատուած էր, սնունդը խափա-
նուած: Յանկարծական զրգումամբ նորա մէջ
հատարւում էր ահադին ֆիլիքսիական ոյժ—այս
հաստատում էր ուժաշափ մեքենան. բայց այս-
պիսի բռնկումը իսկոյն հանդուժում էր և լարուած
ոյժերը սաստիկ ընկնում էին: Նորա փորք ուռած

էր, միտնըները դանդաղ էին, երեսի միտնըները թուլացել էին, այնպէս որ գէմքը թթու և ճրնշուած արտադրութիւն էր ստանում, նա վաղուց ճաշակել էր սիրոյ պատճենը, բայց կարծես թէ նորան աւելի հրապուրում էր թուլամորթութեան անսխառութիւնը, քան գրավում էր խիական սէրը, այդ կողմից ևս ֆիզիքայէն անպէժ էր նա:

Այս բոլոր ֆիզիքական պահասութիւնները ազդում էին նորա հոգեկան անձնաւորութեան վերայ: Նա երկչոտ էր, ծայր և ձանձրացող: Նորա բարկութեան յանկարծակի բռնկումները միտնըներին լարմանց պէս շատ արագ ընկնում էին: Նորա կամքը և ուշադրութիւնը միտնըների պէս դանդաղ էին, իւր բնութեան մէջ գործութիւն չգտնելով՝ միշտ հպատակում էր և խաղալիկ էր դառնում օտարի կամքին: Սոսկալի կերպով կատկածու էր, ահաբեկուած էր, միշտ վախենում էր հիւանդութիւններից, գողում էր ամէն մի ձայնի շշուկից: Նորընծայ շարագործներին մէջ շատ հասարակ բան է երկիւղի և կատաղութեան այսպիսի լծորդութիւնը: Նոքա դադարդալով տուն են մտնում, որ մի գողութիւն անեն, բայց եթէ մոլութեան ձանաղարհին մի վտանգաւոր վիպի հանդիպին, նոցա զարհուրանք մի ակնթարթում արձակք է դառնում, որով ջղերն իսկոյն զօրանում են և հասարակ դողերից նոքա դառնում են եղբրական մարդասպաններ, Մեր գէպքը լաւ օրինակ էր, թէ ինչպէս երբեմն թուլութիւնը բարկութիւն է ծնանում: Ուրեմն բժշկութիւնն էլ թուլութիւնը պէտք է զօրացնէր, և ոչ թէ կեղծ գործութիւնը թուլացնէր: Այս տեղ հանդստացնող դարմանը, զոր օր բրոմաւոր կալիոնը՝ չէր օգնէ: Ահա Ֆլեօրին ևս այդպէս վարուեցաւ:

Նա նախ և առաջ խաղաւ հեռացրեց ամէն գրգռիչ նիւթերը—գինին, օղին, սուրճը, գարեջուրը: Այ մի կերակուր աւելսրգով չպէտք է գրգռէր սնունդը, որպէս զի ուղեղը չթունաւորուի, Հիւանդը վախեցած հնազանդեցաւ այս կարգին անտրուանջ, նա սկսեց խմել միայն ջուր: Բժիշկը պատուիրեց նորան վաղ դարթնել, մարմինը շփել մաքրոտ ձեռնոցով, ապա կարճ փամուռակ գրադուիլ մատուր աշխատութեամբ, այն է արտադրել Ֆլեօրինի կազմած հարկաւոր առողջապահական կանոնները, որոնք լաւ ապաւորվում էին հիւանդի մօրի մէջ: Թէպէտ հիւանդը շատ գթուարանում էր վաղ դարթնել, բայց աշխատում էր հեշտացնել այդ բանը, երեկները տնից դուրս չգնալով և քնելու վաղ պոռակելով:

Միայն երկիւղ ազդել հիւանդին, թէ նա կարող է ոճիր գործել,—բաւական չէ, հիւանդը միշտ կարծում է, թէ մարդուս կամքը ամենագոր

է, թէ բաւական է «միայն կամենալ» և անտարակաւ կատարուի բոլոր մեր ցանկութեան: Բաւական է հիւանդի մօրի մէջ ապուրել, և դա կամքը հիւանդ է, տկարացած է կամ միտնընչել խաղաւ անդամալոյժ է, և թէ անոր վիճակում բէք ինքնախաբուութեամբ պէտք չէ յայտնել, պարզապէս պէտք է կրթել, լաւացնել, զօրացնել: Այս վախճանով լաւագոյն հնարն է ուղեղը զօրացնել կանոնաւոր անունգով և առողջապահական կանոնքին վարժուելով: Բժշկելու ժամով նախ Ֆլեօրինի սկսեց գործ գնել բնագործունէյան քիչ աւելացող քանակութիւններով, ապա այն արականութիւնն ու ազաջրի սրկումը, Այս սրկումները այնպէս են ազդում, որպէս թէ արեան շինուկի քանակութիւնն աւելանում է, որ շատ էփան և անխնայ բժշկութիւն է:

Մի ամիս դարմանելուց յետոյ հիւանդ վիճակը զգալի կերպով լաւացաւ: Նորա գէպոյն և հողագոյն մարմին վարդի պէս պայծառացաւ, երկչոտ աչքը բաց և հաստատ արտադրութիւն ստացաւ, միտնընչ ոյժը այնչափ բարձրացաւ, որ հիւանդին թուում էր, թէ իւր մարմինը թեթեւացել է, ստամոքսն սկսեց կանանաւոր և փքր աշխատել: Այդ միջոցին բնաւորութիւնը էլ կտուեցաւ, բռնկումները պակասեցին, և թուլութիւնները անհետացան, հեռն էլ կորան ու կտուեցաւ: Զարմանալի բան է—աղով խնամել մարդուն, որպէս զի նա թողնէ բարկութիւնը: Բայց Ֆլեօրին շատ փորձելով համոզուեցաւ, որ այդ միջոցը իրական և զօրաւոր է:

Ուրեմն բարկութիւնը յայտնի կապ ունի ոյժերի նուազման, յոգնութեան հետ, նեարդային դրութեան սաստիկ սպառման հետ, Բարկութիւնը թուլաջղութիւն է և բժշկվում է որպէս հասարակ թուլաջղութիւն:

Սակայն հարկ է զգուշացնել մի շիոթութիւնից: Զայրացողները միշտ թուլաջղ չեն, Զլատուած և մաշուած նեարդի տէր շարացողներին հետ միասին՝ մեր առաջ հանդիմանում են սաստիկ սրամտող մարդիկ ևս, որոնք նեարդաթուլութեան ոչ մի նշան չեն ունենում: Սոք ընդհակառակ խիստ առողջ արարածներ և կարմիր երեսով և կարճ վզով, արեւնայեղց կա արեւնաշատ կոշուածները, որոնց համար ի զուկերպով չեն ասում, թէ կաթուածահարութիւն է գոցա վախճանը: Այդպիսի «մոտգործներին» տխրանական կատաղութիւնը ոչ նուազ արժանի է

դական խնդրանքներն արշալի և թուրամարմիններն
 քուրթիւնը:

Գիմուհի երկու ակաբեր խնամ արարելը են իրա-
 ւորութեամբ թուրամարմինը հնշտ գրգռուող է:

Վանքի խնայեցը— միշտ գրգռուած է: Առաջինը
 խորհում է իւր սովորական թմբուր թիւնը
 զի մէկ քայլով առաջ է, բայց և նոյն արա-
 ւորութեամբ հանդիման է: Իսկ երկրորդը միշտ և
 արարելի պէս «ծղում» է: Երբէք իւր
 ական վայրագութիւնը չթաւալանալով:
 Երկրորդ է յանկարծակի բռնիկը ստակալի
 գործել և խնայել սպասուիլ բարձր ոյժե-
 րու բարկութեան անմիջապէս իր փոխա-
 րկումը: Բոկ արեւնայեցը կամ լինչպէս
 և կոչում է՝ հիւպէրէստենիկը— գերիվի-
 ռուսողը՝ միշտ գառող, յամառ, պնդա-
 խնդանաւան, կոտորար, անդու թի-
 ւական է: Տէնց որ մի քան իւր կամքին հա-
 ղ լինել նա խնայել գնում է գոնէրը կտարը-
 իւր մէջ փրփուող ոյժերի կուտակութիւն-
 պատառում են ամբարտաւիր և զոպած
 Տէրեղի պէս է թափվում: Այսպիսի մարդիկ
 քաղցում կարող են ապշեցնել իրանց հերո-
 տամբ և գործել քաջութեան հրաշքներ:
 Բայց արժամարհելով մահը: Ասիւր անպար-
 անութիւնները՝ նոցա փոթորկող ոյժերի
 անբարեկամութիւնը եւ: Բոկ մարդիկ զարմա-
 ւով աշակերտի սկսող սրժութիւնները՝ արձան-
 են կանգնեցնում ի պատիւ նոցա և ի խրատ
 շորք սերնդներին: Քանի որ պայպէս զարդացող
 խորադ հիւպէրէստենիկներից անվերջ պատե-
 յումներ են նիւթել Քրանսիայի համար: Այս
 մէկ հրաւիրարները, նապոլէոնի շնորհով գուրս
 ւաճառն եղածները, խաղաղութեան ժամա-
 յի խելքու գլուխը կորցնելով՝ ուրիշ ոչինչ զբաղ-
 ւեք չէին գտնում: Բայց եթէ վիճելով իրանց
 հակակիցներին հետ կամ չարարելով իրանց
 նմանը կանանց: Առտեղադմամ նոցա իրանց
 պաճի չափ անքաջան՝ արեւան մէջ լողալին:
 Բայց երբ նապոլէոնից յետոյ խաղաղութեամբ թա-
 ւաւորական ցեղը վերահաստատուեցաւ՝ ստիպ-
 ւեցան իրանց ամեն ոյժերը մարդել անվերջ
 քնել իսկիններով և մենամարտութիւններով: և
 ուրիշ ամանակուայ Քրանսիայի պատմութիւնը
 ղել լին մենամարտութիւնների, գաւաղութիւն-
 հուճաւ պայմանութիւնների շարքերն են կազմում:
 Ինտուս մէկն այնպիսի օշխարհներ, ուր որ
 էր բացվում, իսկ ամանք, որ աւելի զոպը-
 ւանք, այնուպատճ, տաղանդաւոր էին, արշաւե-
 րին գրականութեան մէջ և հայրենիքին ծառայու-
 իւն մատուցին անհամար թատերական դեր-
 անմարմնութիւն, վէպերով, բանաստեղծութիւննե-

րով, միշտ ներդրելով ու մի խելահալ թեան,
 անձնապահութեան անհամեմատ առաքելութիւն-
 ները— ամենաանձարժակ երեսակայութեան հա-
 մեմուսներով հանդերձ:

Քրեօրին հարկաւ խնամել է այդպիսի ծաղա-
 գրգիւս հիւանդներին ևս: Զոր օր, մի առաւ Գի-
 խայել Ս. ...ին: Այս 13-ամեայ մանուկը երկու
 տարեառաջ արթննալի և անբնիճելի ցանկութիւն
 էր զգացել— խնդրել իւր կրտսեր քրոջը, Խեղճ
 մանուկը իւր քոյրը թող ոյժերով մարտում էր
 այս սառանաշահան թերադրութեան դէմ, բայց
 ի դուր, մինչև որ խոտովանձացաւ ծնողներին,
 խնդրելով արագաւան իրան այս բնիճող ցաւից:
 Բայց այնպէս անտարբերութեամբ խօսեց, որ
 կարեւորութիւն չառնին ստածներին: Սակայն վեր-
 չապէս հարկաւոր սեպուեցաւ բժշկի խորհրդեան
 գիմել:

Քննութիւնից երեւցաւ, որ Գիխայիլը
 առողջակալմ մանուկ է, իւր հատակի համար
 շատ ուժեղ է, վարդապոյն բոլորակ աչակեր ունի
 և մի արտապայտութիւն գէմբի, որի վերայ դրոշ-
 մած է մի տեսակ անասնական կենսական դասու-
 թիւն: Նորա հոգու մէջ ալեկոծում արձա-
 րելի յուզումը՝ առեւ թէ բնաւ չէր սեպցնել և
 խուսարացրել իւր սիրաբ: Երեսի վերայ կարելի
 էր նշմարել այլատեսութեան մի քանի նշաններ-
 ապարտութիւն էին դործում մանուկանդ նորա
 մխրադոյն պողպատա՝ աչքերը, որ թիւ արմա-
 տին շատ մօտ էին կպած: Երբ որ նա սկսում էր
 իւր հրէշալին իշխող գազափարի մասին մտածել,
 նորա աչքերը այնպէս էին պողպում, որ Քրեօրին
 կոչում է «հնշտ սուր դանակի պէս փայլող»: Դի-
 ւահարութիւնը սկզբում կրկնվում էր նորա մէջ
 ամիւր երկու կամ երեք անգամ, բայց հետզհետեւ
 աւելի յաճախանում և աւելի հաղածական էր
 դառնում: Նա բոլորովում էր առաւելապէս հնց
 այնպիսի բույժներում, երբ որ քոյրը աւելի խան-
 դաղատանօք և քնքրութեամբ էր վարվում եղ-
 քօր հետ, իւանդութեան դարձի կամ առտիքի
 ժամանակ միշտ թուում էր նորան, իրը թէ իւր
 ուղեղի մէջ ծաղում է մի ինչ որ ահաղին զօ-
 րութիւն: Նա զգում էր, որ իւր ամբողջ էութե-
 թիւնը թեթեւանում և ուժեղանում է, առեւ
 թէ տառնապատկիւմ է: Այդ ժամանակ աչքերը
 արիւնով լցվում էին և գայթակղուելով առե-
 նում էր, թէ ինչպէս խեղդում է քրոջը: Տեսա-
 բանը աւելի և աւելի կենդանանում և մարմնա-
 նում էր և մի անձառելի դօրութիւն զրգում և
 մղում էր պատկին, որ արեւնաշաղաղ դործը
 իրականացնէ ամենայն մանրամասնութիւններով:
 Եւ յանկարծ— մի հարում ևս, և բացվում էր
 նոր առտարան— շարունակութիւն և լրացումն
 առաջին առտարանի, նորա առաջ պատկերա-

նստւմ էր: Երբ թէ գործն արդէն կատարուել է, թէ քուրկը մեռած ընկած է իւր ոտքերի առաջ և թէ մռայլ յոտահատութիւնը տանջում և տառապում է իւր հոգին: Այդ միջոցին արթնում էր նա և զգաստանում այդ մղզառանձից, ջարդուած և պարտադատած. բայց ապա մի քանի օրով կատարեալ հանգստութիւն էր ստանում և ուշք ու մտքի էր գալիս:

Մանուկն սկսում էր շատ լաւ իմանալ թէ սպանութեան ծարսի աշտպէս կրկնուող զայրուցքները ո՛ւր պիտի հասցնեն. ո՞վ գիտէ, իցէ թէ մի օր էլ չկարողանայ գայթակղութեան զինանալ և այն ժամանակ անշուշտ կը սպանէ քրոջը: Տարօրինակ և զարհուրելի պատկեր, ասես թէ նորա առաջ խաւար ժամանակներէց կենդանանում էր ո՛ր գրոց պատմութիւնը այն գայթակղելէ շար գետն մաւրն: Երբ Սաւուղին դրդում էր սպանել Գաւթին:

Այսպիսի մղզառանձից երկու օր յետոյ Միլտայիլը բոլորովին խեղճ էր դալիս և իւր սովորական կերպարանքն էր առնում. սկսում էր աշխոյժ կայտառութեամբ չարութիւններ անել միշտ պատրաստ գոյով մէկի հետ վիճել և կռուել. նա շատակեր էր, անհանգիստ էր և այնքան ոյժերի առաւելութիւններով, որով նա անդադար մղում էր ստանում վազկզել, ոտատետել, մազլցել, աղաղակել և յաճախակի անդուռն բերանով խնտ անվայել լուտանքներ թափել:

Ստուգուեցաւ որ Միլտայիլն հայրը գինեմով է եղել. հէնց իւր ամենաոտտիկ արեւոցողութեան օրերից մէկում ևս յղացուել է այս զաւակը: Միլտայիլն քոյրը, որ նոյնպէս արեւոցողութեան օրերումն է յղացուել, կաթուածքի հարուածքներ էր ունենում: Երբ թեթեւ կերպով նոյն իսկ Միլտայիլն վերայ էլ նկատուել էր: Այս հանդամանքներից Քլեօրին եղբակացրեց, թէ մանուկն եղբրական մղզառանձի պարբերութիւնները, որ խոհական հոգեկան մոլորութեան առաւելներ էին, պէտք է նկատուէին իրեն վեհաժողութեան զայրուցքներ. մէկը յայտնի կերպով երևում էր միւսի փոխարէն: Բժշկի առաջ կարճի ծածուկ և սքողուած վեհաժող, և ուրեմն հիւանդը պէտք է բժշկուէր քրոջն ուր կալիսնով, այն ևս մեծաքանակ չափով: Եւ իրօք բժշկութիւնը այնքան յաջող էր, որ երեք ամսուայ ընթացքում սպանելու ցանկութեան կրկնութիւնները քիչ քիչ խոպառ անհետացան:

Քլեօրին մի երկու օրինակ էլ է բերում, որով հաստատուում է, թէ այն բոլոր տղայական չարութիւններն ընկնումներն ու սպանութեան անընկճելի մղումները բացատրվում են մանկանց վեհաժողութեամբ: Աւրեմն եթէ մեր առաջ այնպիսի մանուկ կամ հասակաւոր լինի որ թէպէտ յայտնի հոգեկան խանգարում չունենայ, բայց

յաճախակի երեւցնէ սաստիկ բարկութեան բոլորն հումներ, բժիշկը նախ և առաջ պէտք է հետազօտէ, արդեօք հիւանդի մէջ նեարդային թուլութեան հետքեր չկան. եթէ կան—ուրեմն դա մի վատուած է, որ պէտք է բժշկուի զօրացուցել: զարմանով, իսկ եթէ այդ նշանները բացակայում են, ապա ուրեմն բժշկի առաջ հակառակ դէպքի օրինակ է, այսինքն նորա առաջ մի ծայրագրկաւ անձնաւորութիւն է, որ կենսական զօրութեանց աւելորդութիւնից է տանջվում. այսպիսի դէպքերում շատ անգամ հարցախորձով հաստատվում է, որ հիւանդը ժառանգական գինեմովութեան զոհ է: Հարկաւ, ոչ ամենայն անդրադրվող վեհաժող է կամ արեւոցողի զաւակ է, բայց յամենայն դէպս նորան պէտք է դորմանել քրոջն ու հանգերձանքներով, որ որպէս հանգստացուցել միջոց անշուշտ պիտի օգնէ:

Աւրեմն բարկացող մարդկանց երկու ծայրայեղ տիպեր կան, որ արտաքին նշանով ևս երևում են՝ իւրանց «գունատ» բարկութեամբ կամ «կարմիր» բարկութեամբ: Բայց և այնպէս նոյն իսկ բարկութիւնը իրականապէս միշտ միակերպ երևայթ է՝ այսինքն զանազան պատճառներից առաջացած ծայրայեղ զգացողութիւն. այս բանը հաստատում է մարդու արտաթորող գործարանների չափազանց գործունէութիւնը—նորա աչքերից թափվում է արցունք, կաշուից և գեղձերից—քրտինքն ու թուքը: Ահանջ արեք նորա խօսքերին. նա ժայթքում է ջնկուած լուտանքների մի ամբողջ բաւարան, նորա մկուռները արձակուել են, բռունցքները քոր են դալիս, նա ոտքերը բախում է, ծեծում, կոտորատում, կործանում, աւերում և շարժում է, ինչ որ իւր ձեռքի տակ ընկնի: Նորա ատամները կրճատում են, աչքերը կոպերից դուրս են թաշում: Այս բանը խիստ անհասկանալի է, կարճատեւ մոլեղնութիւն է—*furor brevis*, ինչպէս որ հնէն էին անուանում: Այս ալեկոծութիւնը տևում է, մինչև որ վարարած ոյժերն աւելորդութիւնը չոպառուի. յետոյ մըրկին անցնում է, հորիզոնը բացվում է, հոգին խաղաղվում նստում է:

Տարօրինակ բան է տաք բարկութեան ժամանակ ամէն ինչ ունշացնել շուրջը: Այս կարող է լինել մի հետք մեր նախնական գաղանակն վիճակի, երբ որ մարդկային կատաղութիւնը էլք և գահացում էր դանում միայն Ֆիդիքական չարաշնչութեամբ, խորտակմամբ, աւերածութեամբ և արկահեղութեամբ: Բայց միթէ միայն բարկութեամբ է արտայայտվում մեր ջարդ ու փշուր անելու ուրախութիւնը, մորթելու և սպանելու պահանջը: Հապա ի՞նչ է մեր որոյ, կենդանիներն սպանութիւնը, որ շատ անգամ կատարում ենք առանց ստիպողական կարելի, լսկ

միայն դու արձանալու համար: Ֆլեօրին ճանաչում է երկու շատ խաղաղասէր և բարեկիրթ վաճառականների, որոնց նեարգելքը ժամանակ առ ժամանակ ստատիկ զբոսում է: Չայրույքի այսպիսի բողբոջներում նորա հեռանում են Փարիզից և սկսում են գնատահարել ճաղարներին, որ միայն այդ նպատակով բաղմոցնում են իրանց աղարակներում: Այս արևնախոնձ կտորումը շարունակում են նորա մինչև որ արևնահողմիտան ծարաւը կարուի, ապա նորա զգուսում են այս կտորածից, հանդստանում և դառնում են իրանց ուղևորական գործերին: Եթէ իրանց պարբերական գրգռութիւնը այսպէս չպարպէին, ով գիտէ թէ ինչ խնդութիւններ պիտի գործէին: Ճաղարի կտորածքը միակ հնար է իրանց համար, որ նեարգային ու ժի աւելորդութեան էլը տան: Ֆլեօրին ջղացաւ հիւանդներից մէկը իւր ամէհի բարկութեան ժամանակ շանը մորթեց, հաւատացնելով, թէ իւր դաւակին կը մորթէր, եթէ իւր կատաղութեան զոհ չընարէր պատահած հաւատարիմ շանը: Ֆլեօրին պատմում է, թէ ինչ չնչին պատճառներով բարկութիւն կարող է առաջ գալ: Մի բարենոյի բայց թուլանեալը ուսանող դաստիարակութիւն լուրջաւ այնպէս էր նըրտած, որ մի ամբողջ ժամ արեւի ճառագայթների տակ մնաց: Ֆլեօր տաքութիւնից ինքն էլ այնպէս տաքացաւ, որ դաստիարակութիւնից յետոյ առանց որ և է պատճառի սկսեց վիճել իւր սիրած կնոջ հետ և գաղանի կատաղութեամբ ջախջախեց նորան:

Բնաւ չկատաղեցնելով կամ չղայրացնելով մարդուն, կարելի է նորա մէջ բարկութիւն դըրգուել խիստ պարզ արուեստական միջոցներով, նախ և առաջ ամէնուն քաջ յայտնի է գինու ներգործութիւնը այսպիսի գէպքերում: Ֆլեօրին պատմում է թէ ինչպէս մորթու տակ աղաջուր որսկելով բարկութիւն է առաջ բերել: Նորանից օգնութիւն խնդրեց իւր աղախները, որ խիստ թուլակազմ, վախ և սակաւարեւն էակ էր, Սա հաղիւ կարողանում էր ոտքի վերայ կանգնած մնալ, և պարզ զգուս էր իւր ծանր տկարութիւնը կարծելով թէ թոքախտ է և թէ շուտով մեռնելու է: Ֆլեօրին պատուիրեց երկաթի զեղեր տալ նորան, բայց անօգուտ: Այն ժամանակ վճռեց փորձել նորա վերայ արուեստական արեան շիճուկը, այսինքն աղաջուրը: Մէկէնիմէկ վեր առաւ խիստ մեծ չափի սովորականից կըրն աղախիկը, և որսկեց, հաղիւ մի ժամ անցաւ և առնը տակնուվրայ եղաւ անկարգութիւններից: Այս անսովոր ազմուկից Ֆլեօրին անհանգիստ եղաւ և գնաց տեսնելու, թէ ինչ է պատահում: Անակընկալ տեսարան, այն սակաւարեւն աղախները, որ հաղիւ ոտքերը շարժում էր, կարծես թէ մոզա-

կան դաւաղանի ազդեցութիւնից բոլորովին ուղեւերացուել էր, Սա մի ուրիշ արարած էր դառել: Բոլոր երեսը կարմրած, կրակ թափող աչքերով, դէս ու դէն վաղվիզում էր, ամանները կտորատում էր, ամէն պատահածին յեռոցներով հայհոյում էր, և առ հատարակ ինչպէս մի արբեցած էր վարվում: Այն ինչ բերանը ոչինչ չէր գրել, բայց առաւօտեան մի դաւաթ կաթից, Գորա այգ օրուայ միջային զօրութեան սպառումը ահագին էր, կարծես թէ գեանից վերուվեր էր թաչում, և ուրիշ անգամ հաղիւ լուսած ձայնը, այսօր որոտում էր աղաբար փողի պէս: Երեսում էր որ աղաջրի մեծ քանակութիւնը տանապաւակել էր նորա էութիւնը: Երկու օրից յետոյ, երբ որ այսպիսի ու ժի մակընթացութիւնը տեղի էր տուել, Ֆլեօրին նորից աղաջուր որսկեց, բայց առաջին կէս քանակութեամբ, Այս անգամ հիւանդը առաջուայ պէս չկատաղեց, այլ փոքր ինչ անհամբեր և զրգուած հանգիստացաւ, որ արտայայտուեցաւ արտառուցներով, բարձր ծիծաղով, յարաշարժութեամբ և բարձրաձայն խօսելով, նա կարել էր զգուս կենտական զօրութեանց չափաւոր աւելորդութիւնը իւր էութիւնից դուրս հանել: Մի քանի օր էլ անցաւ, և հիւանդին կրկին որսկեցին աղաջուր, բայց այս անգամ աւելի ևս քիչ չափով: Այդ քանի ներգործութիւնը այն և դաւ, ինչ որ պէտք և հարկ էր սպասել, հիւանդը մի տեսակ կրտսրական հաւատարակչութեան վիճակ ստացաւ, էլ չէր նշմարվում նորա մէջ ոչ թախծութիւն և ոչ զրգուսութիւն: Այս ժամանակ Ֆլեօրին սակաւ առ սակաւ աւելացրեց չափը և հասաւ ցանկացած արդիւնքին: Հիւանդը առաւ կատարեալ առողջ մարդու կերպարանը, որ հանգիստ է, անձնավստահ է և իւր զոյութիւնից զոհ և ուրախ է:

Այս հետաքրքրական փորձը Ֆլեօրին հնարաւորութիւն տուեց, որ ինչպէս ինքն ասում է, «մատով կարողանաւ շոշափել մարդկային հոգեկան յուզմանց բոլոր աստիճանաւորութիւնները, սկսելով կատարեալ անտարբերութիւնից, ճահճային անփութութիւնից, մինչև սաստիկագոյն բարկութիւնն ու կատաղութիւնը»: Ֆլեօրին մի տախտակ կազմեց հոգեկան շարժումների աստիճանաւորութիւնները մերձաւորապէս նշանակելու համար, որ իւրաքանչիւր վիճակը համապատասխանում է արեան որոշ աստիճանի ճնշման, որ ամփոփոքամ (զարկերակաշափ) կոչուած գործիքի վերայ սնդիկի բարձրութեամբ է խմայվում և հարկերեւորգամետրներով է կարգացվում: Ահա այն տախտակը:

Արեան
բանի հա-
րաբերութեան
դաստիարակ-
անքան ման
կանական

ՀԱՐԱՊԵՏԱՆԻ ՀԱՊԵՏԱՆԻ ՎԻՃԵԿ

30	Ամեն հաւատարմութեան զայնուցքը
29	սպանութեան հակառակ:
28	
27	Գթութիւն, հատաղի շարժումներ և
26	խօսքեր, խորտակելու պահանջ:
25	
24	Խանդարութեամբ արամաղրութիւն, ար-
23	ցունք, աննպատակ շարժումներ և
22	զոյս մանկ, ծիծաղ, խել այս բոլորը
21	միայն այն խորհրդով, որ աճեցած
20	զօրութեան աւելորդին ելք արուի:
19	Արդար ցատու ման անարդանօր, արևու-
18	թիւն, արտապնդութիւն:
17	
16	Ազնկայից ուրախութիւն, աշխոյժ
15	արամաղրութիւն:
14	Հանդիստ ուրախութիւն:
13	Քաղցրաժպիտ արամաղրութիւն:
12	
11	2է դոր, անտարբեր արամաղրութեան
10	կամ հոգեւոյ հաւատարակչութեան
9	սահման:
8	
7	Հեզութիւն, համեմատութիւն:
6	Վատաստութիւն:
5	
4	Տխրութիւն, ծանծրայթ:
3	Յագնածութիւն:
2	
1	Ծուլութիւն:
0	
	Վախիտութիւն, ահաբեկութիւն,
	ամաշխատութիւն:
	Երկիւղ:
	Թմբկած վիճակ, հոգեւոյ կենդանու-
	թեան զրոյ աստիճան:

Սակայն ինքը Ֆլեօրին խոստովանում է, թէ այս տախտակը չի կարող կատարելա ճշդութիւն ունենալ: Նա չի ուզում պնդել, իբր թէ իւրաքանչիւր անձն, որի արեան ճնշումը հասել է 30 հարիւր բերրողամեարին, անպատճառ պիտի ձգտէ մի մարդ սպանելու: Այլ նա ուզում է մի մտաւոր դադախար տալ արեան ճնշման նշանակութեան մասին: Տախտակը հաստատում է մի շատ կարեւոր իրողութիւն, այն է թէ մեր հոգին ողբան կախում ունի մեր մարմնից: Նոյն իսկ մեծ հոգեւաններից սմանք պնդում են իբր թէ

մարդկային հոգին իսպառ անխտիրելի է, և թէ այնպէս անհնարին է նորա բնաւ որո թիւնը կտրել կամ նորա հոգեկան բնութիւնը կատարելագործել, ինչպէս և կատարներին թելադրել, որ միևնրին յիշամանեն: Բայց և այնպէս թուլանկարգերի փոքր ինչ ուսումնասիրութիւնը մեղ պէտք է համոզէ, որ մարդկային հոգին ժամէ-ժամ փոփոխութեան է ենթարկում: Մարդը երկնոտ և արևուր է, որովհետև մարմնով թռչ է. նա բարկացող է, որովհետև ի ներքուստ ուժի մակընթացութիւնից ազդուեցաւ: Այս ելևէջները մենք կարող ենք արուեստական միջոցներով առաջ բերել՝ օդիով, սուբմով, սթրինինով (բնամիջով) — աւաղան առնելով, մարձեկով, հոտի սաստիկութեամբ, ազաջուր սրակելով մոթիւ տակ:

Մեր ուղեղը շատ նման է բարդ մեքենային: Նա էլ մեքենայի պէս աշխատում է: Գրգռուած, զայրութիւն վայրագութեան բոլորներում ուղեղը ահագին քանակութեամբ աշխատութիւն է արտադրում: Եւ ո՛ր է ուղղում աշխատութեան առատութիւնը: Քանզեւ, ջարդելու, անկարգ շարժումներ անելու, բռնել հնչեցնելու համար: Եթէ, — երազում է Ֆլեօրին, — եթէ հնար լինէր ծարար զրդիւ անձնաւորութիւններին այնպէս ուղղել, որ մի հասարակօգուտ գործ արտադրէին, եթէ նոցա շատ ման դալ տային, գործ կատարել տային, զոր օր, զինուոր դարձնէին, նորա անշուշտ կը բժշկուէին: Ֆրանսիան կադատուէր տաքլուխ գժերից, եթէ նոցանից կադմուի դադթականութեան զօրք, ուր նորա ևս մարդ կը դառնային, ինչպիսի կերպով ծախսել սովորելով իրանց ոյժերի առատութիւնը: Հիւանդներից ոմանք Ֆլեօրին խոստովանել են, թէ իրանց ստատիկ դրգուման բռնկումները երբեմն կարողացել են հանդստացնել լոկ միայն մի բաւ զրօսնելով: Բայց հարկաւ այստեղ պէտք է խորութիւն դնել: Աշխատութիւն շատացնելը, առ հասարակ ոյժերի գործածութիւնը՝ հոգին հաւատարակչաւելու բաւ միջոց է միայն ծայրագրդիւններ համար. իսկ թուլանկարգերին այդ միջոցը կը պատճառէ ոչ թէ հաւատարակչութիւն, այլ քնդհանրաւ իսպառ կը մաշեցնէ նոցա, որ արդէն կանխաւ պարտաւորւած էին: Աւտի և քանիցս կրկնել ենք, թէ թուլանկարգերը կարօտ են զօրացուցիչ բժշկութեան, և ոչ թէ սպառնցուցիչ դարմանի:

Տախտակը միայն բարկութեան համար նշանակութիւն չունի, այլ մեր բոլոր զգացումներին կերպի ծայրայեղութիւնները համար, արեւութեան և սրտխութեան համար: Հոգեկան յոգնածութեան մեծա զուգընթաց է ֆիզիկական կարմրութեան սպառումը: Հոգին ու մարմինը

միշտ միատեսակ զօրութեան և թուլութեան մտ-
կրնթացութիւն և տեղատուութիւն ունին: Նեար-
դերով յազնաճները կարող են արտայայտել ընդ-
նուած հոգւոյ ամէն աստիճանաւորութիւններ՝
անհանգստութիւն, անվճռականութիւն, փոքրո-
գութիւն, ծուլութիւն, ահ, անձկութիւն: Առ-
հասարակ նորա կարեկից են ուրիշի չարչարանք-
ներին, որովհետեւ միշտ ձգտում են այլոց ուշա-
դրութիւնն ու գութը դարձնել իրանց ասնջանք-
ների վերայ: Կատակած, ծուլութիւն, երկիւղ, վիշտ
— այս ամէնը ուղեղի սպառման աստիճաններ
են. գոռոգութիւն, յանդգնութիւն, բարկութիւն,
անձնասիրութիւն, քաջութիւն, հերոսութիւն,
անգթութիւն — ուղեղի զրդւման աստիճաններ
են: Աւելի է այս: Անշուշտ, փորձի համար վեն
առէք անհասարակչաւանդիկ այս կամ այ-
լամբին պատահանող մէկին: այնպէս կամ ընդհու-
ածին (թուլանեարդին) և կամ վիզը բարձր բռնու-
ղին (ժայռազրգիւ մէկին): Առաջին դարմաներ
ցէր լատ զօրացուցիչ դեղով, երկրորդին՝ հանգըս-
տացուցիչ ճարով: Գութ խեղճ կը նկատէք այդ
երկուսի արամազրութեանց կատարեալ փոխո-
խութիւն, դոցա հոգւոյ այլակերպութիւն. գոքա
ուրիշ մարդ կը դառնան — բառիս բուն նշանա-
կութեամբ:

Արեւմտեան ընդունական կրթութեան խոհական
խնդիրն այն է, որ հասարակչաւանդիկ մարդկանց
բարբի ծայրայեղութիւնները, որ «քաջալերուն»
զանգաղները և «ստաշին» խիտ տար գլուխներ-
ը: Այդպիսիների երկու խումբն էլ ներդաշնակու-
թեան ասնջանից դուրս են կեցած և խան-
դարում են հոգւոյ հաւասարակչութիւնը: Թոյ-
լերը միշտ ասնջում են վշտից, խի խիղախ-
ները, յարաշարժները, իրանց զօրութեանց առա-
տութիւնը շաւղորդները՝ շուրջ չորս կողմը սեր-
մանում են դժգոհութիւն, թշուառութիւն և
շիթթութիւն: Մարդու զարկերակը համարելով
արգէն խմանում ենը նորա հոգւոյ արամազրու-
թիւնը, աւելի ճիշտ տեղեկութիւն ենը ստանում
արեան ճնշումը չափելով, Այս ճնշումը փոխ-
վում է հոգւոյ արամազրութեան հետ ի միասին:
Թուլանեարդների արեան ճնշումը հասնում է ամե-
նայաջող դէպքերում (չաւ արամազրութեան ժամա-
նակ) 12 հարիւրերորդամեարին, ապա 13-ից մինչև
16-ի ճնշումը առհասարակ համապատասխանում
է հոգւոյ չէզոք հասարակչաւանդիկ. այս թուից
ի վեր ճնշումը առաջ է բերում հոգեկան կորովի
յորդառատութիւն, խի ի վայր ճնշումը՝ կորովի
նուաղումը: Առ այժմ Գլխորդի տախտակից այս-
բան միայն պէտք է եղանակցեն, բայց այսբան
էլ խրատական է:

Ս. Ս.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆՍԵԱՆԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՋ.

(ԲՆԵԱԳԱՏՈՒԹԻՒՆ և ՈՒՍՈՒԱՅԲ)

ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ.

Հայոց հին «վէպերի» կամ «վէպի» մասին
1850 թուականից ի վեր ուսումնասիրութիւն-
ներ են լինում. բայց խնդիրը դեռ ևս պար-
զուած չէ, այլ մանաւանդ թէ պարզուելու
փոխանակ աւելի մթնացիկ է շնորհիւ երկու
ճայրայեղ ենթադրութեանց:

Հանգուցեալ Էմինը՝ աւելի ցանկութեան
քան թէ իրականութեան վրայ հիմնուելով,
Խորենացու Հայոց Պատմութեան Առաջին
գիրքը և Երկրորդ գրքի մի որոշ մասը հա-
մարում է մեծ մասամբ, եթէ ոչ ամբողջա-
պէս, ժողովրդական վէպից, երգերից ու զրոյց-
ներից քաղած մի պատմութիւն: Մարաբաթի
գիրքը՝ մի կեղծիք, և Մարաբաթ, Խորենացու
հնարածը: Իսկ Պ. Գ. Խալատեան 1896 թուին
հրատարակած իւր աշխատասիրութեան մէջ²
գալիս է այն եզրակացութեան, թէ Խորենա-
ցու «վէպ» կոչուած աղբիւրները շինծու (ֆիկ-
տիւ) են, և թէ «վէպ» անուան տակ «ժաժ-
կուած են մի ամբողջ շարք զանազան, թարգ-
մանական և ինքնագիր, գրաւոր յիշատակա-
րաններ», որոնք և Խորենացու խիական
բայց «թաքցրած աղբիւրներն»³ են, և թէ
Խորենացու շատ անգամ յիշած «Հայոց վե-
պ» «ստորաբար գրքերի ծագում ունի և
մեծ մասամբ Աստուածաշնչի մոտիւների շատ
ու քիչ ծարպիկ փոխադրումն» (вкусная
переработка) է, որ հենց իրեն պատմադրի
գրչին է պատկանում⁴:

1. Էմին, Վէպ հնոյն Հայաստանի, Մոսկուա, 1850:
2. Խալատեան, Վէպի մասին, Էմինի երկասիրութիւններ հա-
յոց լեզուի, գրականութեան և պատմութեան մասին»,
Մոսկուա 1898:

Էմին, Մոսկուա Խորենացին և հայոց հին վէպեր,
բարգձ. Գ. Խ. Թիմիս, 1886, սուս. ընտրութիւն 1881
թ. հրատարակած:

2. Գ. Халатьянъ, Армянскій Эпосъ въ Ис-
торіи Арменіи Моисея Хоренскаго. Москва. 1896.

3. Եմին, հր. 340.

4. Եմին, հր. 342: